Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
դեկտեմբերի 28-ի նիստի N 54
արձանագրային որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՋՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՇՎԻ ԱՌՆՈՂ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Միջոցառման անվանումը | Նպատակը, խնդիրը, ոլորտում իրականացվելիք միջոցառման նկարագիրը | Պատասխանատու կատարողները և համակատարող-ները | Ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը, ֆինանսական միջոցների չափը | Ակնկալվող արդյունքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. Ջրօգտագործողներին մատակարարվող ջրի ծավալի հաշվառման տարբերակների առաջադրում: | Մատակարարված ոռոգման ջրի հստակ հաշվառում իրականացնելու նպատակով ջրամատակարարման համակարգերում անհրաժեշտ է ջրառի կետերը, մայր ջրատարներից մինչև ներտնտեսային ցանցի բաժանարար հանգույցները հագեցնել ժամանակակից ջրաչափական սարքերով (նախնական հաշվարկներով շուրջ 2100 ջրաչափեր), դրանք միացնելով SCADA համակարգին | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | 2019 թ. ոռոգման շրջանի սկիզբը | ՀՀ պետական բյուջե՝ համաֆինանսավորման մասով<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ | Հաշվառման համակարգի կատարելագործում |
| 2. Ջուր մատակարարող և ջուր սպառող սուբյեկտների միջև պայմանագրային հարաբերությունների կատարելագործում: | Պայմանագրային հարաբերություններում իրավունքների և պարտավորությունների հստակեցման նպատակով նոր օրինակելի պայմանագրի ձևի մշակման համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան օրենսդրական հիմքեր: | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | 2018 թ. ոռոգման շրջանի սկիզբը | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՋՕԸ-ջրօգտագործող հարաբերությունների կանոնակարգում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 3. Գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող համայնքներում ջրօգտագործողների կողմից նորմատիվային ջրօգտագործումից ավել փաստացի ջրօգտագործված ծավալի փոխհատուցման մեխանիզմների սահմանում: | Գերնորմատիվային և նորմատիվային հողատարածքներ մշակող ջրօգտագործողների ֆինանսական պայմանների իրավահավասարություն՝ գերնորմատիվային ջրօգտագործումից առաջացած լրացուցիչ հասույթի նվազեցման միջոցով: | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե<br><br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2018 թվականի սեպտեմբերի 1-ը | Ֆինանսավորում չի պահանջվում | Համակարգի առավել արդյունավետ շահագործում, ոռոգման ջրի ու ոռոգելի հողատարածքների առավել արդյունավետ/նպատակային օգտագործում: |